

ԱՅՈՒՒ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՅՈՒՆԿՈՎՍԿԻԱՆՅ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

14 Ապրիլ

1925

Համար 3462/20

Հոգեշնորհ  
Տ. Ներսէս վ, Տօլապեան  
Տեսուչ վանուց Հայոց  
ԼԱԻՈՂԻԿԵ

Անտիոքի Հաճի Հապիպլի Գիւղէն ՄՏԻ, Տիար Պետրոս Չմպտեանի կողմէ Ս, Աթոռոյս կտակուելիք կալուածի մը մասին 6 Հոկտեմբեր 1922 թուակիր եւ Համար 431 մեր պաշտօնագրով յանձնարարած էինք ժամանակին Ձեր Սիրելութեան, տեղւոյն վրայ քննութիւն մը կատարել եւ տեղեկագրել մեզ կտակուելիք այդ կալուածին վայրը, տեսակը, տարեկան եկամուտը, եւայլն, որպէսզի ըստ այնմ ընթացք տրուի յիշեալին բարեպաշտական այդ բաղձանքին: Յարդ այդ խնդրոյն վերաբերմամբ որեւէ հարողագրութիւն չէ ընդունուած Ձեր Սիրելութենէն: Միւս կողմէ, յիշեալ ազգայինը վերստին դիմելով մեզ, հազար ոսկիէ աւելի արժող իր այդ կալուածը Ս, Աթոռոյս կտակուելու որոշ փափաքը կը կրկնէ, խնդրելով որ օր առաջ կարգադրութիւն մը ըլլայ այդ մասին:

Որոշմամբ Տնօրէն ժողովոյս կը յանձնարարենք Ձեր Սիրելութեան, որ անձամբ տեսակցութիւն մը ունենաք յիշեալ ազգայինին հետ, եւ քննէք կալուածը իր բոլոր պարագաներովը: Եթէ համոզոււմ զոյացնէք թէ, այդ կալուածը Ս, Աթոռոյս վարչութեան ղեկավարութեան տակ կրնայ իրական օգուտ մը չկրնար ձեռք բերուիլ ապագային, թելադրեցէք ՄՏԻ, Պետրոսին, ծախել իր կալուածը եւ փոխարժէքը Ս, Աթոռ զրկել:

Այստեղ այդ գումարին արժէքովը վանքապատկան հողերուն վրայ նոր շէնք մը կը կարողացուի, պայմանաւ որ ատոր եկամուտը մինչեւ իր մահը իրեն յատկացուի կանոնաւորապէս, եւ յետ մահու կալուածը Ս, Աթոռոյս բացարձակ սեփականութիւնը դառնայ:

Կարելոր նկատուած է նաեւ այժմէն գիտնալ, թէ ՄՏԻ, Պետրոս Չմպտեան ամուսնացած է, զուակներ եւ կամ այլ մօտաւոր ազգականներ ունի, եւ ուր կը գտնուին այժմ:

Կպասենք այս մասին Ձեր Սիրելութեան անմիջական պատասխանին մանրամասն տեղեկութիւններով:

Ողջունիւ Սիրոյ, Ազօթարար  
ՊԱՏՐԻԱՐԵ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ

*Կարապետ Գրիգորյան*